## Արձանագրություն N 3

Ազգային ժողովի կարիքների համար դյուրակիր համակարգչի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման

07.09.2026թ.
ք. Երևան, Բաղրամյան 19 ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Կուրղինյան*, Մ. Համբարձումյան, Ա. Դարբինյան, Գ.Ավետիսյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Հովհաննիսյան

*Նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամներ՝ Լ. Կուրղինյանը, Գ.Ավետիսյան*

### 1. *Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 07.09.2026թ. ժամը 14:30-ին: Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ 1-6-րդ, 8-16-րդ և 18-րդ չափաբաժինների մասով Կոմուս ՍՊԸ-ի, 7-րդ և 17-րդ չափաբաժինների մասով Սմարթլայն ՍՊԸ-ի և 19-րդ չափաբաժնի մասով ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի կողմից իրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկվել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց վերոնշյալ մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0*

### 2. *Տվյալներ՝ ընտրված մասնակցի, անգործության ժամկետի, պայմանագիր կնքելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության վերաբերյալ*

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի 1-6-րդ, 8-16-րդ և 18-րդ չափաբաժինների մասով Կոմուս ՍՊԸ-ին, 7-րդ և 17-րդ չափաբաժինների մասով Սմարթլայն ՍՊԸ-ին և 19-րդ չափաբաժնի մասով ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակիցներ:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ՝ _______________ Վ. Թորոսյան

անդամներ՝ _______________ Մ. Համբարձումյան

_______________ Ա. Դարբինյան

քարտուղար՝ _______________ Ռ. Հովհաննիսյան